

ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆԶԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հենրիկ Բախչինեան

Խոշորագոյն աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնն ունի երկու հիմնական ակունքներ՝ բանահիւսակամ եւ գրաւոր-գրական: Վերջինիս մէջ կարեւորագոյնն, անկասկած, Աստուածաշունչն է՝ իր Հին եւ Նոր Կտակարաններով: Այդ Սուրբ Գրքերին, հիմնականում ընթերցանութեամբ, քաջատեղեակ է եղել ջերմեռանդ հայ քրիստոնեայ բանաստեղծը: Նա թերեւս բանաւոր ճանապարհով հաղորդակցուել է նաեւ աստուածաշնչեան որոշ պատմութիւնների ժողովրդականացած տարբերակներին:

Յատկանշական է, որ մեր երգիչն Աստուածաշնչին անդարադարձել է առաւելապէս իր թուրքերէն երգերում, որոնք հասցէագրուած են առաւելապէս քրիստոնեայ լսարանին եւ որոնք մէջ նա հարկ է համարել աւելի շատ արտայայտել իր՝ հայ քրիստոնեայի խոհերն ու ավրումները:

Թուրքերէն խաղերից մեկում բանաստեղծը յայտնել է այն միտքը, թէ բոլոր կրօնների սուրբ գրքերից ամենափորձարկուածը, անարատը («գարափ գաբութ») մերն է՝ քրիստոնէաներինը (Թ-5)¹:

Մի ուրիշ թուրքերէն խաղում երգիչը Հին Կտակարանի (Քիթաբ) կողքին յիշատակելով Ղուրանը, առանձին է դիտարկել Աւետարանը (Ինջիլ):

«Այս երեքը գրուած է ամենագոյ Սատծուց. մէ՛կ Սուրբ Գիրքը, մէ՛կ Ղուրանը, մէ՛կ էլ Աւետարանը» (Թ-102):

Մեկ այլ խաղում ականարկելով Սուրբ Հոգու ներշնչմամբ եւ քառասուն սրբագիր հեղինակների ջանքերով ստեղծուած Աստուածաշունչը, ասել է.

«Գրուած է ընտիր պատմութիւնն Աստծոյ շնորհիւ. հոսել է քրտինքը ճակատներից» (Թ-20):

Երգիչն իր խաղերում յիշատակել է բազում աստուածաշնչեան անուններ, դրուագներ, ասոյթներ ու պատկերներ: Բնականաբար, բազմիցս յիշել է Ադամին եւ Եւային եւ մարդու առաջին մեղսագործութիւնը: Սայաթ-Նովայի անունով յայտնի հայերէն խաղերից մեկը, մեծաւ մասամբ, նուիրուած է այդ թէմային: Բերենք խաղի առաջին երկու տները.

Աստուծ խիպ արից սրվրա՝
ըստիղծից նախ մարդըն Աբամ.
Աբամի կուղեմէն Բաշից,
Յիվան տըվից նըրան համդամ:

Համդամ գ' ուզիմ՝ էս ձիգ դարար,
Տերնն ասաց՝ չո'տիմ էս բար,
թէ չէ կու տեսնիմ մինն դարար,
վուր արիլ իմ էս պըտղի համ²:

1 Սայաթ-Նովայի խաղերի յղումներն ու մէքերն ունենրը կատարել ենք ըստ մեր «Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգութիւնը» աշխատութեան (Երևան, 2016)՝ փակագծերում Հ (հայերէն) եւ Թ (թուրքերէն) յապաւումներով նշելով համապատասխան խաղի համարը:

2 Տե՛ս Սայաթ-Նովա. Հայերէն խաղեր, Երևան, 1984, էջ 92: Այս խաղը Մորուս Հասրաթեանն ընդգրկել է իր կազմած ժողովածոյի հիմնական

բաժնում՝ համարելով, որ այն համապատասխանում է երգչի ստեղծագործութեանը: Սայաթ-Նովայի եմթաղորութեամբ, սա «հեղինակի ուշ շրջանում յօրինուած գործերից մեկ է, երբ նա տարիք էր առել եւ, մասնաւոր, որպէս հոգեւորական, հարկադրուած էր աւելի շատ գործ ունենալ Աստուածաշնչի-Աւետարանի հետ» (Սայաթ-Նովա. Հայերէն, վրացերէն, աղբրեջաներէն խաղեր

Գրեթէ նոյնն է աստուած նաեւ որոշ թուրքերէն խաղերում, ինչպէս.

«Մեծն Աստուած Ադամին ստեղծեց, կողից հանեց՝ կողակից ստեղծեց» (Թ-68):

«Տէրն իր գորութիւնը ցուցաբերեց, մարդուն ստեղծեց, արարեց լոյսը, Ադամին՝ լոյս, կնոջը՝ լոյս. շար սատաման օձի կերպարանք ընդունեց, կեցրեց (նրանց) նուռ, պտուղը՝ նուռ, հատիկը՝ նուռ» (Թ-47):

Ադամը եւ Եւան ներկայացուած են լոյս մակդիրով, քանի որ Լոյս-Աստուած մարդուն ստեղծել էր «ի պատկեր իւր»: Ասենք նաեւ, որ այստեղ երգիչը, թերեւս ինչ-որ բանաւոր ավանդութեան հիման վրայ, իմացութեան ծառի արգելուած պտուղը Համարել է նուռը:

Բերենք նաեւ այլ օրինակներ.

«Արարիչը նախ ստեղծեց մարդուն. նուաճ պատճառով ակամայ մեղք գործեցին, մեղքի պատճառով դրախտից վտարուեցին, նրանց նման շատերը նուոր ուղեցին: (Թ-71):

Մեղքը դառն է, բայց բազմաբնույթ է. այդ պատճառով է Ադամը դրախտից վտարուելը» (Թ-66):

Ուշագրաւ է, որ մի մրցավիճային խաղում աշուղ-բանաստեղծը պատասխանելով իր իսկ տուած հանելուկային հարցին, ասել է. «Սարն ու քարը Ադամի արիութիւնն են» (Թ-95): Ադամի արիութիւնն, ըստ երեւույթի, բացատրւում է այն բանով, որ նա յանդգնելով ճաշակել իմացութեան պտուղը՝ իմաստութեամբ պահպանել է մարդկային ցեղը, ուստի եւ աստուածային շող-հրից չի վառուել ու ոչնչացել աշխարհը (սարն ու քարը)³:

Մի Հայերէն խաղում էլ յիշատակուած են Ադամ նախահօր որդիները՝ Աբէլը եւ Կայենը, որպէս, Համապատասխանաբար, բարութեան եւ չարութեան խորհրդանշաններ.

Ով քիզի այեան մըտիկ տայ,
Աբէլին Կայան մըտիկ տայ... (Հ-35)

Սայաթ-Նովային վերագրուած մեկ այլ Հայերէն խաղում («Սուսան-ամբուլ դաստամազդ») յիշատակուած են Նոյ նահապետը եւ Համաշխարհային ջրհեղեղը:

Ջրնիդիլէն նու այիբ,
Վուր փըրկըվից նու այիբ,
Նոյին գէմին ազատից,
Ինձ՝ Այիբ, նու, նու այիբ⁴:

Նոյին (Նով անուանաձեւով) անդրադարձումներ կան նաեւ թուրքերէն խաղերում, ինչպէս.

«Նոյին Աստուած իշեցրեց սարից. երբ վտանգն անցաւ:» (Թ-94):

Աշխարհը յանձնեց նահապետ Նոյին. նետոյ աշխարհին արձակի՛ր, գնա ապրի՛ր» (Թ-27):

Այստեղ ակնարկուած է ջրհեղեղից յետոյ Աստծոյ խօսքն՝ ուղղուած Նոյ նահապետին. «Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ւք եւ լցէ՛ք գերկիր» (Ծճճդոց, Թ, 1):

Մի թուրքերէն խաղում Նոյեան տապանը գործածուած է իրրեւ մի իւրօրինակ Համեմատութեան եզր.

«Սրտիդ բաղաւր պատի՛ր Բարուկէ շէնքերով,
որ Նոյ նահապետի (տապանի) նման, ջրհեղեղից էլ չհանդուրի»: (Թ-44):

Թ-116 խաղում էլ յիշատակուած է Նոյ նահապետի որդի Քամը:

որի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ս. Հասարթեան, Երևան, 1963, էջ 84-85, 256): Սակայն, ինչպէս մշտեցիմք, երգիչը ճշգրիտապէս չէր ասել այս կարգի թուրքերէն երգեր. որոնք ընդգրկուած են մեր ինքնագիր Դասարթում, այն է՝ յօրինուած են մեր երիտասարդ տարիներին:

3 Այս կապակցութեամբ տե՛ս Ծ. արք. Գալուստեան, *Աստուածաշնչական սուրբեր*, Երևան, 1997, էջ 37:

4 Սայաթ-Նովա. *Հայերէն խաղեր*, էջ 91:

Սալաթ-Նովան շատ աւելի անդրադարձներ է կատարել աստուածաշնչեան միւս մեծ նահապետին՝ Աբրահամին՝ Խալիլ (Աստծոյ բարեկամ) անուանաձեւով: Յիշատակել է վերջինիս հիւրընկալութիւնն Աստծուն, նրանց միջեւ ուխտի հաստատումը, Իսահակի ծնունդը, այլեւ զոհաբերութիւնը, որը կանխուել է Աստծոյ հրեշտակի միջոցով (Ծննդոց, Ժէ-ԺԸ, ԻԱ-ԻԲ):

«Աբրահամը Բաղասուն օր ծով պահեց, սպասեց գիշերուայ Հիւրին, սատանան շորս կողմը մշուշով պատեց, տէս ոնց էր ուզում խանգարել, Հիւրը եկաւ Աբրահամի մօտ, նրա որդուն ուզեց, խորհրդակցեց (Աբրահամը) Սառայի հետ... Որոշեց Աբրահամը՝ սպանել իր պատանի որդուն, երկնի գահից ծայն իջաւ. հրեշտակը կախեց (ծառից) ոչխարին» (Թ.94):

Սալաթ-Նովան մի շարք խաղերում չեղտել է յատկապէս Աբրահամի ծոմապահութիւնն ու բռնակալ-սատանային յաղթելը, ինչպէս.

«Աբրահամը բռնակալին յաղթեց, Բաղասուն օր ծով պահեց. (Աստուած) նրան ողորմեց, երկնային դուռ բացեց. գաւաթ պարգեւեց, (ասաց). թվատիր» (Թ.27):

Աբրահամը ծով պահեց, Աստծուն հիւրընկալեց» (Թ.71):

Թէ ուզում ես տեսնել Աստծոյ պատկերը, հայր Աբրահամի պէս Բաղասուն օր ծով պահիր» (Թ.89):

Պէտք է նկատել, սակայն, որ ծոմապահութիւնը վերաբերում է ոչ թէ Աբրահամին, այլ Մովսէսին (Բ Օրինաց, Թ. 9). մինչ այդ, Հին Կտակարանում ծոմապահութեան այլ վկայութիւն չկայ: Ըստ այսմ, Աբրահամի ծոմապահութեան, ինչպէս նաեւ սատանային յաղթելու վերաբերեալ պատմութիւնն, ըստ երեւուելի, բխել է ինչ-որ աւանդութիւնից:

Նշենք նաեւ, որ ուխտագանց-բեհիդար սիրուհուց տառապած մեր երգչի համար Աբրահամը եղել է ուխտ-իդարին համատարիմ մնացողի լաւագուշն տիպար.

«Տէս ինչ հաւատարիմ մնաց Աբրահամն իր ուխտին» (Թ.87): Ուստիս խառնել է. «Եթէ ուզում ես հայր Աբրահամի պէս ապրել, խոստում-երդումիցդ մի՞ նահանջիր» (Թ.88):

Թուրքերէն խաղերից մեկում յիշատակուած է նաեւ աստուածաշնչեան վերջին նահապետ Յովսէփը (Ուսուի անուանաձեւով): Խօսելով իր աստանդական վիճակի մասին հրգիչն իրեն համեմատել է աստուածաշնչեան այդ հերոսի հետ, որը երկար տարիներ ապրել է օտարութեան մէջ (Ծննդոց, ԼԹ և հտն.):

«Պանդխտութեան մէջ տխրում եմ... կանչում եմ կուրծքս ճեղքի՛ր, Յովսէփի պէս օտարութեան մէջ այնքան վիշտ պիտի կրեմ» (Թ.53):

Սալաթ-Նովան, բնականաբար, բազմիցս անդրադարձել է նաեւ Հին Կտակարանի մեծագուշն դէմքը Համարուող Մովսէսին (Մուսա անուանաձեւով): Անդրադարձել է յատկապէս Սինա (Թուր) սարի վրայ աստուածաւաք օրէնքների ստացմանը.

«(Աստուած) լոյս արձակեց Սինա սարի վրայ, արշալոյսը Մովսէսին հանապարհ ցոյց տուեց» (Թ. 27):

«Աստծոյ ձայնը Մովսէսին օրէնքներ թելադրեց... Դուռն է Սուրբ Դրոմ, (սեւով) սպիտակի վրայ, Մովսէսը սարի վրայ պղնձից օձ սարեց... (Թ.95): Մովսէս մարգարէն, որ Սինա սարը բարձրացաւ, վիշապազլուխ գաւազանը զարկեց» (Թ.119):

Մի խաղում էլ ասուած է. «Փրկութիւնը կիջնի երկնքից, ամպից» (Թ.35): Այստեղ արձագանքուած է Աստուածաշնչից բխող այն պատկերացումը, թէ Աստուած մար-

դուն յայտնուում է ամպի տեսքով կամ ամպի միջից: Այդպես է Տէրը Սինա սարի վրայ երեւացել Մովսէսին (Ելից, ԺԹ):

Թ-68 մրցավիճային-հանելուկաւոր խաղում երգիչը յիշատակել է Ահարոնի ծաղկած գաւաղանը. «Խ՞նչ փայտ էր, որ չոր էր, բայց կանաչեց»: Ահարոնը Մովսէսի եղբայրն էր եւ Տիրոջ կամքով օծուած առաջին քահանայապետը: Սայաթ-Նովան նրան յիշել է նաեւ Թիֆլիսի Մօղնու Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգութեան առթիւ գրուած խաղում, ասելով. «Տապանակ ուխտի կրտակաւ խորանդ Ահարոնի նըման» (Հ-45): Այսինքն՝ խորանդ Ահարոնի ուխտի կտակով տապանակի նման է: Ուխտի տապանակն, ըստ Սուրբ Գրքի, Աստուծոյ կամքով պատրաստել էր Մովսէսը եւ այնտեղ դրել աստուածազիր օրէնքների տախտակները եւ Ահարոնի գաւաղանը (Թուոց, ԺԷ, 8, Եբրայեցիս, Թ, 4):

Մեկ այլ հայերէն խաղում Ունիէլ անուանաձեւով յիշատակուած է աստուածաշնչեան Ունա Հեքուսացին որի կալը դնել է Դաւիթ թագաւորը եւ այնտեղ Տիրոջ համար ողջակէզի սեղան եւ ապա տաճար է կառուցել (Ա Մնացորդաց, ԻԱ). «Վոր չէ Ունիէլի նըման՝ կալ անիւրն ինչի՞նչ է շահ» (Հ-44):

Սայաթ-Նովան յիշատակել է նաեւ Դաւթի որդի Սողոմոնին՝ մեծարուած Իմաստուն տիտղոսով: Վերջինս որպէս Իմաստութեան տիպար է ներկայացուած նաեւ երգչի մի հայերէն խաղում. «Թէգուզ մըտօք ճարտար ըլի, կանց Սողոմոն դադա ըլի» (Հ-25): Այս Իմաստուն արքան Սուլէյման անուանաձեւով յիշատակուած է նաեւ երգչի երկու թուրքերէն խաղերում: Դրանցից մեկում ասուած է. «Աշխարհում ո՞վ է անմեղ, Սողոմոնի՞ն անայեք» (Թ-92):

Բանաստեղծն այստեղ նկատի է ունեցել այն իրողութիւնը, որ Սողոմոն արքան, հարուստ, զօրեղ եւ Իմաստուն լինելով

հանդերձ, մեղանչել է Տիրոջ առջեւ (Թագաւորաց, ԺԱ, 1-9): Իսկ այն խաղում (Թ-53), որտեղ յիշատակուած է Յովսեփը, յիշուում է նաեւ Սողոմոնը, եւ դարմանալի է, որ երգիչը նրան եւս համարել է օտարութեան մէջ ապրած. թերեւս դա եւս արձագանք է ինչ-որ աւանդութեան:

Սայաթ-Նովան քաջածանօթ է եղել Սողոմոնի աստուածաշնչեան գրքերին (ժողովող, Առակաց, Երգ երգոց), որոնց որոշ ազդեցութիւնը զգալի է նրա ստեղծագործութեան վրայ: Յիշենք նաեւ, որ նա իր քահանայութեան շրջանում (1766-ին) ընդօրինակել է մի ժողովածու, որն ընդգրկում է Սողոմոնի գրքերի մեկնութիւնները⁵:

Մեծ սիրերգուին, բնականաբար, առաւել հոգեհարազատ է եղել Երգ երգոցը: Այս գրքի «Մեղր կաթուցանեն շրթունք քո» (Երգ Երգոց, Դ, 11) նշանաւոր տողն արձագանք է գտել նրա մի հայերէն, մի երկլեզուայ (հայերէն-թուրքերէն) եւ մի թուրքերէն սիրերգում.

«Պըտշէմէյ միդր է կարում, բուղմիս՝ եսխէյ
բաց կու՛յի» (Հ-9):

«Պըտշէմէյ միդր է կարում» (Թ-9):

«Շուրբերից մե՛ղր հոսեցրու» (Թ-38):

Հայերէն սիրերգերից մեկում բանաստեղծը բառաշրջել է «Ես անջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ» երգերգոցեան պատկերը (Երգ Երգոց, Ե, 2) եւ ինքնատիպօրէն արտայայտել է չխ-սիրուց արեւածի իր հոգեվիճակը. «Քու էշխըն ինձ իմաստ արաւ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած» (Հ-16): Նոյն այս խաղը երգիչն աւարտել է հետեւեալ տողով, որ արձագանք է երգերգոցեան «Ես՝ ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց» տողի (Երգ Երգոց, Բ, 1). «Կարմըրագում՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա»:

Թուրքերէն խաղերում Սայաթ-Նովան, առանց անունները տալու, յիշատակել է

5 Տե՛ս Երեւանի Մատենադարան, ձեռ. 4270:

նաեւ աստուածաշնչեան մարգարէներին, ինչպէս.

«Երեք հարիւր վաթսուց մարգարէ-
ների աղօթքը մերն է» (Թ-5):

«Եօթանասուներկու ազգ կայ, դեկա-
վարում են Աստծոյ հրամանով, երեք հարիւր
վաթսուց մարգարէներն են նրանց առաջ-
նորդում» (Թ-12):

Այս կապակցութեամբ Մ. Հասրաթեա-
նը գրել է. «աշտարակաշինութիւնը (Բաբե-
լոնի) խափանուելուց յետոյ մեկ լեզուով
խօսող ժողովուրդը բաժանուած է բազմա-
թիւ տարախօս ցեղերի, որոնց թիւը հաս-
նում է մինչեւ 72-ի: Մարգարէների թիւն էլ
եկեղեցին հաշուած է 366, որոնք համար-
ւում էին մարդկային մեծ քարաւանի ու-
ղեկցողները - սարվանները»⁶:

Երգիչն արտայայտել է նաեւ այն գա-
ղափարը, թէ մարգարէների կանխատեսա-
կան խօսքերը թելադրուած, ներշնչուած են
Աստծուց (Սուրբ Հոգուց), ինչպէս առհա-
սարակ՝ Աստուածաշունչը.

«Մարգարէներին յայտնի էր դարձել. չի
մնայ այս ունայն աշխարհը, գրի առան
նրանք իրենց սուրբ գրքերի մէջ. վար ու ցա՛նք
արա, գթութի՛ւն արա» (Թ-27):

«Մեծն Աստուած...մարգարէների հրա-
շալի խօսքերն ստեղծեց» (Թ-68):

Նոյն՝ Թ-68 մրցավիճային խաղի
սկզբում աշուղ-բանաստեղծն առաջադրել
է հետեւեալ հանելուկը.

«Ի՞նչ լողորդ էր, որ նաւի մէջ էր. ծովի
խորքում գնահատեց շատ սուտակներ»:

Այստեղ նկատի է առնուած Յովնան
մարգարէն, որին, անհնազանդութեան հա-
մար, Աստծոյ հրամանով կուլ էր տուել մի
մեծ ձուկ (Յովնան, Ա, 17): Իսկ սուտակները
(լալ) այլաբերում են մարգարէի աղօթքնե-
րը, որոնք նա ձկան փորից առաքել է առ
Աստուած:

Սայաթ-Նովայի ստեղծագործութեան
մէջ բազում անգրադարձեր կան նաեւ Նոր
Կտակարանին: Հայերէն յայտնի խրատա-
կան խաղում նա յիշատակել է Աւետարա-
նը, որի սրբազան խօսքերը բնութագրել է
հենց աւետարանական պատուիրանով.
«Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի
խոզաց» (Մատթէոս, Է, 6):

Աւիտարանի խօսքերն մարգարիտ է, կարգը՝
սիրուն.

մի՛ ածի խուզի առջիվըն լալ ու ցօվհար, Սա՛-
յար-Նովա: (Հ-43)

Մեկ այլ Հայերէն խաղում՝ արձագան-
քելով աւետարանական երանիներին
(Մատթէոս, Ե, 5), ասել է. «Աւիտարանը
կու տայ խոնարհ մարդուն եարանին» (Հ-
47):

Աւետարանը յիշատակուած է նաեւ
թուրքերէն խաղերում: Մի տեղ երգիչն այն
կոչել է Յիսուսի Գիրք եւ դարձեալ նշել նրա
մարգարիտ-խօսքերը.

«Յիսուսի Գրքում ընտիր մարգարիտներ
կան, որոնցով խելքահան եմ եղել» (Թ-68):

Թուրքերէն խաղերում Յիսուսը յիշա-
տակուած է Իսա անուանաձեւով (ինչպէս
Ղուրանում): Դրանցից մեկում ակնար-
կուած է Աստուածորդու սուրբ գերեզմանը
Երուսաղեմում եւ ասուած է. «Յիսուսը
բարձրեալ Աստծուց իջաւ. Առաւօտուայ լոյսը
մերն է» (Թ-5):

Հայր Աստծուց առաքուած Յիսուսի,
որպէս Արեգակի, ծագումն այստեղ, աւան-
դաբար, խորհրդարանուած է իբրեւ լուսէ
Առաւօտ (Առաւօտ լուսոյ):

Մեկ այլ թուրքերէն խաղում երգիչն՝
ակնարկելով ծովի վրայ քայլող Յիսուսին եւ
նրա տասներկու առաքեալներին, ասել է.

«Ո՞ւր է նա, որ ակոսեց ծովը՝ տասներկու ա-
ռաքնորդների թագն ու Պարծամբը» (Թ-113):

6 Սայաթ-Նովա, Հայերէն, Վրացերէն. աղբրեջա-
ներէն խաղերի ժողովածու, էջ 267:

Հետեւելով Յիսուսի «Սիրեցէ՛ք զԹշնամիս ձեր» յայտնի պատուիրանին (Ղուկաս, Զ, 27), հրգիչն ասել է. «Սայաթ-Նովա՛, սիրել ես քո թշնամուն» (Թ-36):

Մի թուրքերէն խաղում բանաստեղծն այսպիսի հարց է տուել.

«Ի՞նչ անտառ է՝ կրակի մէջ չի վառում.
անհաւատ է նա, ով սա չի իմանում» (Թ-65):

Նոյն հարցն այսպէս է ձեւակերպուած մեկ այլ խաղում.

«Աստծուց մի շող իջաւ սարին ու քարին,
մոտակայ անտառները չվառուեցին, ինչո՞ւ» (Թ-95):

Նոյն այս խաղում աշուղ-բանաստեղծն ինքը տուել է իր հարցի պատասխանը.

«Ծողը Յիսուսի գորութիւնն է, անտառը
Մայր Մարիամի պատկերն է»:

Բանաստեղծն, ըստ մեզ, նկատի է ունեցել Աստուածամօր «անկէզ Մորենի» աստուածաշնչեան այլաբերութիւնը. քանի որ Մարիամն իր մէջ կրել է Հոռ-Աստուած Քրիստոսին եւ չի այրուել: Յատկանշական է, որ Գրիգոր Նարեկացու խորհրդաբանութեամբ, Աստուածածինը բնորոշուած է նաեւ Ամտառ խորհրդանիշով⁷:

Նշենք նաեւ, որ նոյն այս խաղում իր հաւատին միշտ հաւատարիմ բանաստեղծն ասել է.

«Ով որ Յիսուսին Աստուած չի ընդունի, լեզուն
թող կապվի. չի ամաշում, ինչո՞ւ»:

Մեկ այլ թուրքերէն խաղում էլ երգիչը Յիսուսին յիշատակել է Գոհար խորհրդանիշով. «Մարիամը ծնեց անարատ Գոհար» (Թ-68):

Մեկ ուրիշ խաղում արծարծուած է Քրիստոսի զօրութեամբ սատանայի խոցման եւ զնգան-գժոխքի աւերման թեման.

«Խոցել է ցաւազին, կապել սատանային,
վտարել է սատանային, բանդել գնդանը»
(Թ-71):

Միջնադարեան մեր միւս բանաստեղծների նման, Սայաթ-Նովան եւս սարսափով է յիշել ու պատկերել Քրիստոսի երկրորդ գալստեանը կայանալիք ահեղ Դատաստանին, երբ անարգարները պիտի նետուեն «ի լիճ հրոյն» (Յայտնութիւն, Ի, 15): Ահա սրա արձագանքը թուրքերէն խաղերից մեկում.

«Եռում է արեան ծովը՝ հատակը տեսնողի համար. այն ժամանակ մարդուն կհասնի աղէտը, կտեսնի աշխարհի վերջը. սով ու կործանում» (Թ-35):

Յիշենք նաեւ երգչի նշանաւոր հայերէն խրատական խաղը, որտեղ ասել է.

Թէ գ'ուգիս. վո՛ւր Դադաստան շրտեսանիս՝
վա՛նք սիրէ, անա՛պատ սիրէ. բա՛ւր սիրէ:
(Հ-36)

«Աստուծ խիալ արից սըվթա»
սկսուածքով վերոյիշեալ հայերէն խաղում էլ ասուած է.

Մահըն գումայ ամենան տիղ.
կու լինի Դադաստան անիղ.
աղաչիմ Փըրկիշըն՝ յուսամ⁸:

Սայաթ-Նովան իր խաղերում բազմիցս անդրադարձել է նաեւ աւետարանական մեծագոյն սրբին՝ Յովհաննէս Մկրտիչին: Նրան այս պարագայում, անշուշտ, ոգեշնչել է այն, որ Յովհաննէս Մկրտիչ-սուրբ Կարապետը ժողովրդական հաւատալիքներում համարուել է երաժշտութեան եւ այլ արուեստների, մասնաւորապէս աշուղութեան շնորհատու փիր-սուրբը (Չանգլու-Փիր):

Սայաթ-Նովան իր երկերեղունայ (Հայերէն-թուրքերէն) խաղերից մեկը (Թ-11) ամբողջութեամբ ձօնել է այս սրբին: Ի թիւս այլ որակումների, աշուղ-բանաստեղծը

7 Տե՛ս Հ. Բախչիճեան, Գրիգոր Նարեկացու Գանձարանը, Բէյրութ, 2016, էջ 102:

8 Սայաթ-Նովա, Հայերէն խաղեր, էջ 93:

ներան համարել է «գլխաւոր վարդապետ Ճշմարտութեան»⁹։ Այստեղ Ճշմարտութիւնը Քրիստոսն է՝ մակաբերուած Յովհաննու Աւետարանից (Յովհաննէս, ԺԴ, 6)։ Ասենք նաեւ, որ ձեռագիր եւ հնատիպ Տաղարաններում տարածուած է Յովհաննէս Մկրտիչին նուիրուած «Գլուխ վարդապետ Ճշմարտութեան» սկսուածքով մի տաղ, որին, ըստ երեւոյթին, ծանօթ է եղել Սայաթ-Նովան։

Սուրբ Կարապետին երգիչը կոչել է նաեւ «աշտանակ բոլոր վանքերի»՝ նկատի ունենալով, որ միջնադարեան խորհրդաբանութեամբ, Յովհաննէս Մկրտիչը հանդիսանում է Քրիստոսի լոյսը կրող ու տարածող աշտանակ։

Գովերգելով մեծանուն սրբին, երգիչն ասել է.

«Խօսեալ անգին ջաւանիւ, շաղ ես տուել ակնեղէնը քո. որովայնից երկրպագեցիր. զարմացած մնաց մայրը քո»։

Այստեղ ջաւանիւ-դոհարը գործածուած է Աւետարանից բխող՝ ճշմարիտ, իմաստուն խօսք փոխաբերական իմաստով։ Ապա ակնարկուած է աւետարանական այն դրուագը, ըստ որի դեռեւս չծնուած Յովհաննէսը «խաղաց ցնծալով» մօր՝ Եղիսաբեթի որովայնում, երբ վերջինիս ողջունեց Սուրբ Հոգով յղիացած Մարիամը (Ղուկաս, Ա, 39-46)։ Ըստ այդմ, Յովհաննէսը համարուում է «յորովայնէ յորովայն երկրպագող»։

Խաղի յաջորդ տողում ասուած է. «Անապատից բարբառեցիր. բարերար է մաղթանքը քո»։ Այստեղ ակնարկուած է Յովհաննէս Մկրտիչի «Ձայն բարբառոյ յանապատի» անուանումը (Եսայի, Խ, 3)։

Աւետարանական պատումի Հիման վրայ խաղում ասուած է, թէ Յովհաննէսը Յորդանան գետում մկրտելով Յիսուսին՝

յայտնի է դարձրել մարդեղացած Աստուածորդու եւ Սուրբ Երրորդութեան թաքնուած խորհուրդը (Մատթէոս, Գ, 16-17)։

«Դու ես Տիրոջը բացայայտողը. Երրորդութիւնը յայտնի դարձրեցիր... Ծածկուած խորհուրդը յայտնի դարձրեցիր»։

Ինչպէս Յիսուսը, Յովհաննէսը եւս իր կեանքով ու մահով յաղթել է սատանային («չար սատանային վանեցիր», «Սանդարամետին իր գօրքով դողացրիր»)։

Բանաստեղծն անդրադարձ է կատարել նաեւ Յովհաննէսի մինչ երեսնամեայ հասակը անապատական ճգնութեանն ու քարոզչութեանը, երբ նա սնուել է մորեխով ու վայրի մեղրով (Մատթէոս, Գ, 4)։

«Եւետուն տաւի փառայրի մէջ աշխարհի փամար աղօթեցիր, վայրի մեղր վայելեցիր, (ուտի) փաղըր են խօսեալը քո»։

Յիսուսը Յովհաննէսին համարել է ամենամեծը՝ կանանցից ծնուածների մէջ (Մատթէոս, ԺԱ, 11)։ Սայաթ-Նովան իր խաղում հարկ է համարել մէջ բերել Աստուածորդու այդ խօսքը.

«Գրուած է Սուրբ Գրքում. «Յովհաննէս՝ մեծը կանանցից ծնուածների մէջ»։

Աւետարանական պատումի Հիման վրայ երգիչը մի քանի տողով ներկայացրել է նաեւ Յովհաննէս Մկրտիչի սպանութեան պատմութիւնը (Մատթէոս, ԺԴ, 3-12)։

«Հեթանոսը հիւրեր կանչեց. իր ամբողջ գօրքը ժողովեց, հաւաքուածները տխրեցին. եղբօր աղջիկը չպարեց, եղբուն տուեց գահի վրայ. «Ինչ որ ուզես՝ կտամ» ասաց. մարգարէի գլուխն ուզեց, դահիճն իսկոյն գլխատեց»։

Անմիջապէս յետոյ ասուած է. «Եօթանուն յիշատակեցին, երբ կտրեցին գլուխը քո»։ Յովհաննէս Մկրտիչը, յիրաւի, յայտնի

9 Խաղի հայերէն կիսատողերը եւս, ինչպէս թուրքերէնները, ներկայացնում ենք գրական աշխարհաբարով։

է մի շարք անուն-մականուններով: Բերումած տողը թերեւս բխում է նրա մասին ինչ-որ ժողովրդական աւանդութիւնից:

Այս խոշոր սրբին Սայաթ-Նովան անդրադարձել է նաեւ յիշեալ թուրքերէն մրցավիճակին-Հանելուկաւոր խաղում՝ ասելով. «Ինչ ամիս չխօսեց. մնաց զարմանքի մէջ. Չանգլիմ էր, որ համրին խօսեցրեց» (Թ-68): Այստեղ ակնարկուած է Յովհաննէս Մկրտիչի հայր Զաքարիան, որն իր ամուսինոջ յղիացման մասին հրեշտակի աւետմանը կասկածանքով վերաբերելու պատճառով, մինչեւ որդու ծնունդը, համրացել է,

եւ Չանգլի-Յովհաննէսն իր ծնունդով բացել է հօր համրացած լեզուն (Ղուկաս, Ա, 5-22, 64)...

Այլեւս չծաւալուելով, ասենք, որ Աստուածաշունչը մեծապէս նպաստելով մեծ աշուղ-բանաստեղծի աշխարհայեացքի ու կենսագացողութեան ձեւաորմանը, խորապէս ներագրել է իր դրոշմն ու բազում հետքերն է թողել նրա ստեղծագործութեան գաղափարական ու գեղարուեստական մակարդակների վրայ: